ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Յարգարժան պրն Սուրէնեանց, Ձեր անունն ու գրական գործունէութիւնը հանրաճանաչ են, սիրելի ու գնահատելի ընթերցասէր լայն շրջանակներում: Աթէնքի ազգային եւ Կիպրոսի Մելքոնեան վարժարաններում ուսումնառութիւնից յետոյ Դուք դասաւանդել էք Կիպրոսի կրթական հաստատութիւնում՝ գովելի նախանձաւորութեամբ Ձեր սաներին փոխանցելով Ձեր հոգում մշտավառ հայրենանուէր ոգին ու ջերմ սէրը հանդէպ հայոց հոգեւոր ու պատմական հարուստ ժառանգութիւնը:

Հայրենադարձութեան առաջին շրջանում Դուք հարազատների ու հազարաւոր հայորդիների հետ եկաք Հայաստան՝ Ձեր հոգում ծրարած Մայր Հայրենիքի շինութեանն ու բարգաւաճմանը Ձեր մասնակցութիւնը բերելու ազնիւ փափագն ու երազանքը: Այսօր Աստուծոյ ողորմած կամօք մխիթարուած եւ գոհունակ լինելու շնորհն ունէք, քանզի արուեստի այլ գործիչների հետ միասին Դուք Ձեր ուրոյն նպաստն էք ներդրել մեր երկրի մշակութային կեանքի վերազարթօնքի եւ պայծառացման գործում՝ աստուածատուր շնորհներով հանդէս գալով նախ երգի ու երաժշտութեան եւ ապայ գրականութեան ասպարէզում: Ձեր գրական ստեղծագործութիւնները յատկանշուում են խոհափիլիսոփայական իւրայատուկ ոճով եւ քնարական շնչով, որոնք ընթերցողին հաղորդ են դարձնում մարդկային բարձրագոյն արժէքներին: Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ նաեւ ականաւոր հեղինակների յայտնի աշխատութիւնների թարգմանութիւններով մարդասիրութեան վեհ գաղափարների կարեւորութեան գիտակցութիւնն էք արմատաւորել հայորդեաց հոգիներում:

Մեծարգոյ տիար Սուրէնեանց, հայ գրականութեան եւ արուեստի անդաստանում Ձեր վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Ձեր կեանքի ու գործունէութեան դրուատելի օրինակը միշտ ոգեւորիչ պիտի լինի գրական գործունէութեամբ զբաղուող մեր հայորդեաց համար:

Աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի Ձեզ եւ պարգեւի երջանկութեամբ ու ստեղծագործական նորանոր ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տարիներ: Թող Տէրն Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Ձեզ, եւ թող Բարձրեալի օրհնութիւնը իր ամենառատ պարգեւներով անպակաս լինի Ձեր կեանքից:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 263